ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/468Ա

10/08/2020

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2020 թվականի հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝ 25,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 8,50% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 6 տարի շրջանառության ժամկետով, անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի օգոստոսի 5-ի թիվ 34 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի հուլիսի 28-ին ներկայացված՝ 25,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 8,50% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 6 տարի շրջանառության ժամկետով պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ